

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 17 -ի նիստի /արձ.2/

1. Հաստատել և գործողության մեջ դնել «ԵԹԿՊԻ-ի դասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման ընթացակարգը»:

2. ԵԹԿՊԻ-ի 2017-2018 ուս. տարվա I կիսամյակի միջանկյալ քննությունների վերահսկման ընթացքի վերաբերյալ ՈԱԿ-ի ղեկավար Է. Հակոբյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

2.1 հանձնարարել ամբիոնների վարիչներին ՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպել դասախոսների հավաք և ծանոթացնել ՈԱԿ-ի գործունեության բովանդակությանը,

2.2 իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս ՈԱԿ-ի աշխատակիցներին վիրավորելու համար Կինոյի և հեռուստատեսության ամբիոնի դասախոս Ռուբեն Գրիգորյանին հայտարարել խիստ նկատողություն:

3. Արձանագրել, որ ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել:

Առաջարկել ռեկտորին Կ. Ա. Գրիգորյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 4 տարի ժամկետով:

3.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

3.1.1 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.4.1 կետի համաձայն Կարեն Արտոյի Գրիգորյանը միաձայն ընտրվել է դոցենտի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Կերպարվեստ՝ գծանկար, զեղանկար, կոմպոզիցիա, մասնագիտական տեխնոլոգիաներ» առարկան;

Առաջարկել ռեկտորին Կ. Ա. Գրիգորյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 4 տարի ժամկետով՝ մինչև բեմանկարչության I կուրսի ուսումնառության ավարտը:

3.1.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.4.1 կետի համաձայն Լարիսա Վարազդաստի Ստեփանյանը միաձայն ընտրվել է դոցենտի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Աուդիովիզուալ մշակույթ», կինոարտադրության տեխնիկա և տեխնոլոգիա» առարկաները:

Առաջարկել ռեկտորին Լ. Վ. Ստեփանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 1 տարի ժամկետով:

3.1.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3.1 կետի համաձայն Արմինե Իգնատի Անդրեասյանը միաձայն ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 0,75 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Բեմական խոսք» առարկան:

Առաջարկել ռեկտորին Ա. Ի. Անդրեասյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 1 տարի ժամկետով:

3.1.4 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3.1 կետի համաձայն Հարություն Սերգեյի Ազարյանը ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ) ընտրվել է

ավագ դասախոսի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Ռեժիսուրա», «Վիզուալ մշակութային էթիկա» առարկաները:

Առաջարկել ռեկտորին Հ. Ս. Ազարյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով՝ մինչև հեռուստառեժիսուրա II կուրսի ուսումնառության ավարտը:

3.1.5 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3.1 կետի համաձայն Անահիտ Վլադիմիրի Մեսրոպյանը ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ) ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Պար», «Բեմական շարժում» առարկաները:

Առաջարկել ռեկտորին Ա. Վ. Մեսրոպյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 1 տարի ժամկետով:

3.1.6 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3.1 կետի համաձայն Աշոտ Գագիկի Ազատյանը միաձայն ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 0,5 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Հայկական պար» առարկան:

Առաջարկել ռեկտորին Ա. Գ. Ազատյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 1 տարի ժամկետով:

3.1.7 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3.1 կետի համաձայն Շամիր Արտաշեսի Շախիրյանը ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ) ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Կերպարվեստ՝ գծանկար, գեղանկար, կոմպոզիցիա, մասնագիտական տեխնոլոգիաներ» առարկան:

Առաջարկել ռեկտորին Շ. Ա. Շախիրյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով՝ մինչև բեմանկարչության II կուրսի ուսումնառության ավարտը:

4. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

4.1.1 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն Գոռ Կամսարի Վանյանին միաձայն շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

5. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ռեկտորատի առաջիկա նիստի քննարկմանը ներկայացնել 2017-2018 ուս. տարվա ավարտական աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը:

6. Նամակով դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ խնդրել բակալավրի կրթական ծրագրով 2018թ. ընդունելության համար ինստիտուտին տեղեր հատկացնել Կատարողական արվեստ մասնագիտության «Պարարվեստ» ՄԿԾ-ի համար: